




Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ԱՎԱԳ ՏՈՆԵՐԸ

Մեր եկեղեցական տոնակարգում ամեն տարի Աստվածահայտնության տոնի նախօրյակին և, որպես «բացում» Ծննդյան մեծ խորհրդի, դեկտեմբեր ամսի վերջին օրերին հանդիսավորությամբ և հոգևոր, բացառիկ ցնծությամբ նշվում են մի շարք սրբերի տոները։ Ավագ կամ Մեծ տոներ անվան տակ «Ի վկայան Ծննդեան Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Ավագ տոները, որոնց շարքն ու կարգը հաստատուն է, հետևյալներն են, ըստ մեր Տոնացույցի.

Առաջին տոն. Սրբոցն Դավթի Մարգարէին և Յակոբայ Առաքելուն.

Երկրորդ տոն. Սրբոյն Ստեփանոսի Նախավկային և Առաջին Մարտիրոսին.

Երրորդ տոն. Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի.

Չորրորդ տոն. Սրբոց Որդւոցն Որոտման, Յակոբայ Առաքելուն և Յովհաննոս Աւետարանչին:

Առաքիկության և սրբության մեծ տիպարներ են այս սրբերը, եկեղեցու անձնակազմի և գործիչների, ճշմարտության և հավատքի վկաներ, որոնց հիշատակի ոգեկոչումը թե՛ շատ հին է ժամանակագրականորեն և թե՛ համաքրիստոնէական, այսինքն՝

նրանց հիշատակի տոնակարգումը, ունեն պատմական ու առաքելական բոլոր եկեղեցիները։

Եկեղեցին արդար իրավունքով և պարծանքով է նշում այդ սրբերի հիշատակը, սրբեր, որոնք ապրեցին և գործեցին «չաղագս աստուածագործ օրինաց, յաղագս եկեղեցւոյ և վասն աշխարհի»։

Առհասարակ եկեղեցում սրբերի կյանքը բաց և պայծառ Ավետարանն է ճշմարտության՝ գրված նրանց «արեան հեղմամբ, ի նորոգումն եկեղեցւոյ, և ի պէտս կարօտեալ ոգւոց բարեպաշտից»։ Սրբերի կյանքն ու վարքը ապրված Ավետարանն իսկ է։

Ավագ տոների շարքում հանդիսադրվող սրբերը կոչվում են **սուրբ գրական դեմքեր** կամ **աստվածաշնչական սրբեր**։ Նրանց կյանքի ու հավատքի պատմությունը մեզ հաղորդում են Հին ու Նոր Կտակարանները։

Աստվածաշնչական այդ մեծ սրբերը, որոնք «քաջում էին Աստծու հետ», միաժամանակ կապվում են Քրիստոսի անձի ու Ավետարանի հետ։

Ավագ կամ Մեծ տոների հոգեզմայլ շարականները գրել է մեր եկեղեցական մատենագրության հոգեւից շարականագիրներից մեկը՝ Հովհան Օձնեցին (Ը դար)։ Դավթին

և Հակոբոս Տեառնեղբորը նվիրված շարականը կոչվում է «Յաղթող գտաւ»:

Դավիթը Հին Կտակարանի մեծագույն և հզոր դեմքերից մեկն է՝ Մովսէսից հետո, որպէս մարգարե, թագավոր, բանաստեղծ ու մարդ: Նա կոչվել է «Աստուածահայր»: Այդ բառով արտահայտվում է Փրկչի հետ նրա ազգականության կապը:

«Յառաջնումն Աստուածահայր անուանեցաւ մարգարէն Դավիթ»: Քրիստոսը Դավիթի սերնդից էր, «Որդի Դավթի», ինչպէս վկայում են Ավետարանները և հաստատում նաև՝ շարականները. «Ծագեաց մեզ եղջիր փրկութեան ի տանէ Դավթի»:

Դավիթը որպէս բանաստեղծ ու մեղավոր իր մեծ ու եզակի հոգին բացալ իր հոյակապ սաղմոսների մեջ, իր **սաղմոսարանի** մեջ, որը համարվում է արդարորեն ըստ մեկնիչների իր հոգևոր ու կրոնաշունչ բովանդակության, մտածումների բարձրագույն ու խորության տեսակետից և համամարդկային գաղափարների համար՝ **Ավետարանների նախերգանքը**: Դավիթը որպէս «կյանքը ապրած մեծ մեղավոր»՝ հոգեկան ահավոր տառապանքների, ամենագիտակից ու անկեղծ զղումների գնով, կամքի մեծ լարումով ու համարձակ խոստովանություններով եղավ նաև մեծ սուրբը. «Չանօրէնութիւնս ես ինձէն գիտեմ և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ... Ողորմեա՛, ինձ Աստուած...»:

Դավիթն էր, որ իր հոգեշունչ քնարերգության մեջ հստակորեն տեսալ ու շեփորեց Աստծու Ընտրյալի, Օծյալի գալուստը աշխարհ և ապագա, երկնային թագավորության տեսլականարը և շեշտեց մարդկության հոգևոր վերածնության և հոգեկան հաղորդակցության կապը Աստծու հետ:

Արդարև, ըստ ս. Գրքոց մասնագետների՝ ոչ միայն արյան, այլ նաև ներքին, հոգեկան խորիմաստ աղերս կա թագապսակ Դավթի քնարի և Քրիստոսի Ավետարանի միջև:

Եկեղեցին, Դավիթ մարգարեի հետ միասին նշում է նաև հիշատակը Հակոբոս Տեառնեղբայր առաքյալի:

Պողոս առաքյալը Հակոբոսին անվանում է «Եղբայր Տեառն» (Գալ. Ա. 19):

Տեառնեղբայր Հակոբոսը Երուսաղեմի նորակազմ եկեղեցու ամենաազդեցիկ դեմքերից մեկն է: Նա հիշվում է որպէս եկեղեցու հոգևոր իշխանության երեք սյուներից մեկը, Պետրոսի և Հովհաննէսի հետ (Գալ. Բ. 9): Հակոբոս Տեառնեղբայրն է, որ նախագահում է Երուսաղեմում առաքելական առաջին ժողովին (Գործք. ԺԵ 13): Նրա կարծիքը մեծ կշիռ և վճռականություն ունէր ժողովում քննվող հարցերի մեջ: Պողոսը իր առաքելական քարոզչությունից վերադարձին, Երուսաղեմում նրան է ներկայացնում նախ իր

գործունեության տեղեկագիրը (Գործք. ԻԱ. 18): Տեառնեղբայրն Երուսաղեմի առաքելական ժողովում իր անձնական հեղինակությանը փրկում է եկեղեցու միասնականությունը, երբ անդրանիկ եկեղեցու ծոցում սկսվել էին տարակարծությունների առաջին նշաններ:

Տեառնեղբայրը հավանաբար 72 աշակերտներից էր, ուներ բացառիկ դիրք որպէս «Եղբայր Տեառն» առաքելական խմբի մեջ, և որպէս անդրանիկ եպիսկոպոսը Երուսաղեմի նորակազմ եկեղեցու Քրիստոսի համբարձումից հետո: «Սա եղև գլուխ առաքելոց սրբոց և կոչեցաւ Եղբայր Տեառն» (Ծարական):

Տեառնեղբայրը առաքելական ղեկավար խմբի մեջ աչքի էր ընկնում նաև իր բարեպաշտությամբ, առաքինությամբ և արդարամտությամբ: Նա կոչվում էր «Արդար» իր ժամանակակիցներից: Ծարականագիր Հովհանն Օձնեցին գրում է. «Ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի, նաչեցարուք ընդ Արդարն Յակոբ, որ հաճոյ եղև Աստծոյ վարուքն իրովք»:

Հակոբոս առաքյալի գրչին է պատկանում «Կաթողիկեայց» կոչված առաքելական-ընդհանրական 7 թղթերից առաջինը՝ «Թողթ սրբոյ առաքելոյն Յակովբայ կաթողիկէ» անվան տակ, «որ Նոր Կտակարանի գրականության ամենեն սքանչելի գլուխներեն մին է, որուն մեջ Տեառնեղբայրը Երևան կուգա ճշմարիտ քահանայապետի մը գիտակցության բովանդակ շուք ու շնորհքովը: Կրոնքն ու կյանքը, բարոյականն ու աշխարհը, սրբությունն ու օրենքը, հավատքն ու գործը կպարզաբանվին անոր մեջ վճիտ զգացումներու և հանգչած մտածմանց այնպիսի մեծավաչելույ տրամաբանությամբ, որ բառերուն ներքև անկրկնաբար կլսես աստվածային հոգիի մը հետ շատ կանոխեն ամենամերձ մտերմության մեջ եղած սիրտի մը ազնվական տրոփյունները» (Թորգոմ արքեպ. Գուշակյան, «Աիոն», 1932, էջ 387):

Ավագ տոների մեջ երկրորդը «Արքոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսի» տոնն է, որը ամեն տարի եկեղեցին «վաչելչապէս տօնէ»:

Ս. Ստեփանոսը հավատքի, ավետարանական առաքինության և աստվածաշնչական գիտության մարդն է: Դուկաս Ավետարանիչը իր Գործք Առաքելոց-ի մեջ նրան բնութագրում է «այր լի հաւատով, հոգով սրբով և շնորհօք և զօրութեամբ» (Գործք. Զ. 5, 8):

Ստեփանոսը մեկն էր՝ այն յոթ սարկավագներից, որոնք առաքյալների կողմից ընտրվեցին, առավելապէս սպասավորելու համար աճող և կազմակերպվող նոր եկեղե-

ցուն. «պաշտել զսեղան», այսինքն կազմակերպելու համար աղքատների օգնության և գործության գործը՝ որպես ճշմարիտ ու գործնական արտահայտությունը քրիստոնեական սիրո և եղբայրության:

Գործք Առաքելոց-ի մեջ Ղուկաս Ավետարանիչը հույակապ էջեր է նվիրել նրա կյանքին ու նահատակությանը (Զ 8—Ը 2): Սքանչելի է, մանավանդ, այդ էջերի մեջ տրված ստեփանոսյան ճառը, ուր նա հմտորեն ու համարձակ արիությամբ դատապարտում է մովսիսական կրոնքի մոլեռանդությունը: Ստեփանոսի ճառը միաժամանակ առաջին հույակապ ջատագովությունն է քրիստոնեական կրոնքի ու սկզբունքների վեհության ու համամարդկայնության, հիշատակարանն ու գանձը՝ ավետարանչական գրականության և աստվածաբանական մատենագրության:

Օձնեցին Ստեփանոսի հիշատակին նվիրված իր գեղեցիկ շարականում, «Նահատակ բարի Քրիստոսի», նրան բնութագրում է որպես մեծ նախասարկավագ, որը հանդիսացավ իր արյունով մկրտված «Աստուածային զինու վառեալ առաջին վկայ Քրիստոսի», «երջանիկ ճառագայթ», որ «ընտրեցար ի կոչումն առաքելական քարոզութեանցն», և այդ նահատակությամբ «նախատեղծն պայծառացեալ բերկրեցաւ», «նախաշարի բարեաց ամենայն աշխարհի և լուսագարոյ ճանապարհացն ժառանգորդ»:

Քրիստոսի այս «Բարի նահատակը»՝ Ստեփանոսը, իր առաքելական գործունեությունն ավարտում է նահատակության ամենատակալի ձևով՝ քարկոծումով. «Որ հրեշտակալերպ տեսեամք արիաբար պատերազմեալ, և յօժարական համբերութեամբ զքարկոծումն յանձն էառ, խոստովանեալ գՔրիստոսն»:

Խաչի մեծ խորհրդից հետո, ս. Ստեփանոսի քարկոծումը կրկին անգամ եկավ հաստատելու նոր կրոնքի գաղափարական վեհությունը, սրբությունն ու գերազանցությունը և այդ գաղափարների սիրույն նահատակվողների արիությունը:

«Ստեփանոսի արյունով է, որ առաջին անգամ ողողվեցաւ Քրիստոսի խաչով արորարված այն դաշտը, որ Աստծո թագավորության իրականացումը եղաւ երկրի վրա»:

Պողոս առաքյալի հոգին հրաշալի ծնունդն է Ստեփանոսի հոգեվարքին: Ստեփանոսի մահով է, որ կբացատրվի Պողոսի կյանքը» (Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույն տեղ, էջ 388):

Ավագ տոների երրորդը «Սրբոց առաքելոցն Պետրոսի և Պողոսի» տոնն է:

Պետրոս առաքյալը, արհեստով ձկնորս, բերսամիդացի էր և Քրիստոսի կողմից ա-

ռաքելական քարոզչության և համագործակցության կոչված առաջին ընտրյալներից մեկը, որը Ավետարանի լույսը համարձակորեն ու մեծ եռանդով տարավ Սամարիա, Փյունիկե, Անտիոք, Աթենք, Հռոմ, դարձավ «որսորդ մարդկան» ոռոկանալ Ավետարանի» (Ծարական): Նա վայելում էր Քրիստոսի մասնավոր մտերմությունն իր անմիջականության, արտառուչ ու միամիտ հավատքի ու երիտասարդական խանդավառության, համարձակ նկարագրի համար, հակառակ որ տարիքով ամենից մեծն էր առաքյալների մեջ, Ավետարանների և Գործք Առաքելոց-ի մեջ շատ հաճախ հիշվում է Պետրոսի անունը, առաքելական գործունեության առաջին զծի վրա:

Քրիստոսի համբարձումից հետո նորակազմ եկեղեցու երեք սյուներից մեկն էլ Պետրոսն էր: «Բոլոր առաքյալներուն մեջ ինքն էր նախ որ խոյացաւ դեպի անձանոթ ուղիներ, որոնց վրայէն հետո ուրիշներ ավելի հեռու պիտի երթային: Նախնական եկեղեցվո մեջ, մինչև Պողոսի ասպարեզ իջնելը, ինքն էր նախաձեռնության ոգին» (Թորգոմ արքեպ. Գուշակյան, «Սիրոն», 1933, էջ 445):

Պետրոսի գրչին են պատկանում «Կաթողիկեայց» կոչված Ա և Բ թղթերը՝ գրված առաքելական ջերմությամբ և հեղինակությամբ, որպես քարոյա-խրատական թուղթ:

Պետրոս առաքյալի տոնի հետ նշվում է նաև Պողոս առաքյալի տոնը: Պետրոսը և Պողոսը, ըստ շարականագիր Օձնեցու, համարվում են երկու «ընտրեալներ», «ամուլք հաւատոյ, լուսատրիչք տիեզերաց և սինք եկեղեցւոյ», որոնք իրենց «լուսատր դպրութեամբ» և առաքելական քարոզությամբ «ժագեցան որպէս արեգակն ի յերկրի և լուսաորեցին զաշխարհս ամենայն»:

Պողոսը և՛ իր գործունեությամբ, և՛ իր ս. գրական վաստակով, մտածումի խորությամբ և կորովով ամենահիմնատիպ դեմքն է քրիստոնեական մշակույթի և քաղաքակրթության, Քրիստոսից հետո. նա եկեղեցու առաջին և մեծագույն «աստվածաբանն» է:

Ծնվել էր Կիլիկիայի Տարսոն քաղաքում, Երուսաղեմում ստացել էր իր կրոնական կրթությունը, ուսքի Գամաղիելի մոտ, մոլեռանդ փարիսեցի, հալածիչ եկեղեցու: Դամասկոսի ճանապարհի վրա պատահած հրաշքով և ապա Ստեփանոսի քարկոծման քարոյական ազդեցության տակ և հուսկ ուրեմն իր տեսիլքների միջոցով եղավ մեծ առաքյալը եկեղեցու:

Պողոս առաքյալը քրիստոնեության հզոր և տիրական գործիչն է:

Ծորջ 30 տարիներ անվհատ հարատևությամբ «իր Ավետարանը» քարոզեց համար-

ձակորեն Հոռոմեական Կայսրության մեծ ուսանների և իր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի մեջ:

Նոր Կտակարանի կանոնի մեջ Պողոս առաքյալի գրչին են պատկանում 14 առաքելական, հովվական Թղթեր, որոնք քրիստոնեական մտածության և ներշնչումի անսպառ գանձերն են:

Ավագ տոների շարքը փակվում է «Որդիքն Որոտման» Հակոբոս և Հովհաննես առաքյալների հիշատակի կատարմամբ:

Ըստ Ավետարանի վկայության Հակոբոսն ու Հովհաննեսը երկու եղբայրներ, գավակներն էին քեթսայիդացի հարուստ ձկնորս Զեբեդեոսի: Նրանց մայրը՝ Սալոմեն, Քրիստոսի հետևող բարեպաշտ ու «յուդաքեր» առաջին կանանցից մեկն էր եղել:

Երկու եղբայրները Քրիստոսի «կոչից» հետո, լծվեցին առաքելական քարոզչության: Նրանք, որպես Քրիստոսի ազգականներ, եղել են միշտ նրա մտերմական շրջանակի մեջ: Հակոբոսն ու Հովհաննեսը իրենց նկարագրի ուժգնության և նախաձեռնությունության համար Քրիստոսի կողմից անվանվեցին «Որոտման Որդիներ» (Բաներեգես) (Մատթ. Ի 10, Մարկ. Գ 17, Դուկ. Թ 54):

Հակոբոսը եղավ առաջին նահատակ առաքյալը Երուսաղեմում, հրեական հալածանքների ժամանակ, և 42 թվականին Հերովդես Անդիպոսի կողմից «սրամահ» սպանվեց, ինչպես պատմվում է Գործք Առաքելոց»-ի մեջ (ԺԲ 2), և քրիստոնեական եկեղեցու պատմության մեջ անցավ որպես «Հակոբոս գլխադիր առաքյալ»:

Հովհաննեսը առաքելական խմբի Բենիամինն էր, կրտսերագույնը և երկարակյացը: Ապրեց շուրջ 100 տարի:

Հովհաննեսը նախապես աշակերտել էր Հովհաննես Մկրտչին և ապա իր կյանքն ու գործունեությունը ընդմիշտ կապել Մեծ Վարդապետի հետ՝ դառնալով նրա «սիրելի» աշակերտը:

Հովհաննեսի գրչին են պատկանում Դ Ավետարանը, «Կաթողիկեայց» երեք Թղթերը և «Յայտնություն»-ը: Քրիստոսի համբարձումից հետո նորակազմ եկեղեցու երեք «սին»-երից մեկն էլ հանդիսանում էր Հովհաննես առաքյալը: Երուսաղեմի կործանումից հետո (70 թ.) քարոզելու համար Ավետարանը անցնում է Փոքր Ասիա, երկար ժամանակ քարոզում է Եփեսոսում, ուր և գրում է իր Ավետարանն ու Թղթերը, և 95 թվականին աքսորվում է Պատմոս կղզի, որտեղ գրում է «Յայտնություն»-ը, եկեղեցիվում է նահատակության հասնող տառապանքների և վախճանվում է 100 տարեկան հասակում:

Հովհաննեսի Ավետարանն ու Թղթերը ուղղված են հեթանոսությունից քրիստոնեության դարձած հավատացյալներին, ուր քարոզվում է Քրիստոսի աստվածությունը ընդդեմ այն աղանդավորների, որոնք փորձում էին ուրանալ նրա աստվածությունը:

Հովհաննես Ավետարանիչը Հիսուսին ներկայացնում է որպես հավիտենական Աստծու Միածին Որդին, Լույս և Կյանք, Ճանապարհ և Ծնարտություն, Աղբյուր, ամենայն բարիքների և Հույս Հարության:

Հովհաննես Ավետարանիչը շեշտում է նաև իր գրվածքներում Աստծու հայրության և բոլոր ազգերի եղբայրության գաղափարը:

Ծարականագիրը իր «Կանոն Որդոցն Որոտման» օրհնության մեջ Հովհաննեսին և Հակոբոսին բնութագրում է որպես «քարոզք Բանին ճշմարտության, որք աւետարանեցին յաշխարհի զգալուստ Միածնիդ»:

Մեր եկեղեցին մասնավոր կարևորությամբ նշելով Ավագ տոների Մեծ սրբերի հիշատակը, դրանով կոչ է անում նախապատրաստվել Քրիստոսի ծննդյան մեծ ու սքանչելի խորհրդին, որի վկաները եղան ս. Գրական այդ բացառիկ դեմքերը:

